

42 Սարգիս յայն քաղաք պատուեցեալ անդրէն,
 Ի մեծամեծաց լ' ի փոքերց դասէն
 Համոզելւր յաւէժ ի բովանդակէն
 Ոչ մեկնիլ անտի կալ մընալ անդրէն

43 Այլ որովհետեւ տեսանել ցանկայր
 Զաշխարհն հայրենի զիւր այրի ծեր մայր,
 Որ դեռ ողջ լ' առողջ ի Բիւզանդիա կայր,
 Վասն այն անդանօր մընալ ոչ խոկայր:

44 Եւ մանաւանդ զի ոչ եւս զօրելով,
 Ոչ տըպագրելով ոչ քարոզելով,
 Օգտել իւրայոց ընդ օտարս կելով,
 Առ ազգ իւր ապա դիմէր փութալով:

45 Վերջապէս անտի Սարգիս ելանէր,
 Ի' աստի Լիզուռնայ ողջամբ իջանէր,
 Խումբն Հայոց տեղւոյս որ յայնժամ մեծ էր,
 Ընդ օտարազանց ըննա յոյժ յարգէր:

46 Այս լինէր յամին հազար եօթն հարիւր
 Որ յիսուն եւ չորս եւս ունէր ընդ իւր,
 Պասն աղուհացից յայնժամ դադարիւր,
 Յաւադ Սուրբ շարաթ յոր նաւել շէր դիւր:

47 Աստէն հանդիսիւ ի տօնի Զատիկին
 Ի Հրրաշակերտ մեր եկեղեցին
 Պատարագէր նա գանբիժ գառն Էին
 Երգով եւ տաղիւ ըստ Ազգի ծիսին:

48 Ապա յետ աւուրց ելեալ նա ի նաւ
 Նաւէր յաջողակ հողմով եւ բարեաւ
 Դէպ յԸղմիւռնիա շէն լի վաճառաւ,
 Ուր հասեալ պատուիւր յԱզգէս ոչ սակաւ: